19 հունիսի 2020թ.

ք. Երևան

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ թիվ 398190/16-Վ
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետ Ա. Մնացականյանս, ուսումնասիրելով 19.06.2020 թվականի թիվ _____ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը, քննելով թիվ 1067 վարույթը և կից նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

«Ոփյան գրուպ» ՍՊԸ-ի /ՀՎՀՀ 06953581, տնօրեն Մամիկոն Ոփյանը /հասցե՝ ք. Երևան, Սասունցի Դավիթ 36, ՀԾՀ՝ 3104540365/ ՀՀ հարկային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում չի ներկայացրել 2020թ-ի հունվար ամսվա ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկները, որի համար նախատեսվում է պատասխանատվություն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169^1 հոդվածի 2-րդ մասով:

Վարչական վարույթի շրջանակներում Ա/Ձ Մամիկոն Ոփյանին հասցեագրվել է ծանուցագիր՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը և գործի քննությանը մասնակցելու վերաբերյալ: Նկատի ունենալով, որ ծանուցագիրը ստանալու փաստը հավաստող ապացույց առկա չի եղել, ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի կողմից 20.04.2020 թվականին կայացվել է վարչական վարույթը կասեցնելու մասին որոշում՝ համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի:

Վարույթը կասեցնելու վերաբերյալ որոշումը և ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչություն ներկայանալու, վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը և գործի քննությանը մասնակցելու վերաբերյալ ծանուցագիրը կողմը ստացել է, սակայն վարչական վարույթին չի ներկայացել: Գործում առկա չէ առարկություն կամ բացատրություն:

Այն փաստը, որ Մամիկոն Ոփյանի կողմից մեկ տարվա ընթացքում կրկին կատարվել է իրավախախտում, որի համար արդեն ենթարկվել է վարչական տույժի (15.11.2019թ. թիվ 391468/16 որոշում), սույն գործով դիտվում է որպես պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 34-րդ, 244^2, 281 հոդվածներով և 282 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Մամիկոն Ոփյանի վերաբերյալ հարուցված թիվ վարչական վարույթը վերսկսել:

2. Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169[1] հոդվածի 2-րդ մասով՝ Մամիկոն Ոփյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ նշանակել տուգանք 20.000 (քսան հազար) դրամի չափով:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ 2 * 02647057 * STATE REVENUE COMMITTEE OF THE REPUBLIC OF ARMENIA

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ Ա. ՄԱՆԱՍԱԿԱՆՅԱՆ

Ծանոթություն. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համաձայն՝
Վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ (հոդված 40)
Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգատ կարող է տրվել որոշումը հանձնելու (հանձնված համարվելու) օրվանից հետո երեսուն օրվա ընթացքում: Նշված ժամկետը հարգելի պատճառներով բաց թողնելու դեպքում այդ ժամկետը կարող է վերականգնվել գանգատը քննելու համար իրավազոր մարմնի (պաշտոնատար անձի) կողմից, այն անձի դիմումով, որի նկատմամբ ընդունված է որոշումը (հոդված 288) կամ որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
Խախտողի կողմից տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում (հոդված 305, մաս 1) գանձապետական հետևյալ հաշվեհամարին՝ **900005240487,** վճարման անդորրագրի <<նպատակ>> դաշտում պարտադիր նշելով որոշման համարը:
Տուգանքը նշանակելու մասին որոշումն իրավախախտում կատարած անձին հանձնելու օրվանից, իսկ տուգանքը նշանակելու մասին որոշումը բողոքարկելու դեպքում բողոքն առանց բավարարման թողնելուց հետո 15 օրվա ընթացքում տուգանքը չվճարելու դեպքում այն ենթակա է բռնագանձման օրենսդրությամբ սահմանված կարգով: